

հեռաւորութիւն միայն բաժներ էր այս մայրը զաւկէն: Մայր, որդի իրար դիմեցին, համբոյր, գրկախառնութիւն, «որդեակ», «մայր», «սիրելի», «սիրեցեալ», քանի մը կաթիլ արտասուք զուարթ երեսներու վրայ, եւ ահա այդ քնքուշ երիտասարդ մայրը իր զաւկին ձեռքէն առած՝ իբրեւ թէ յափշտակելով, մտաւ ներս, անցաւ դահլիճը, տարաւ իր սենեակը, նստաւ եւ նստեցուց քովը, հարցմունքներ իրարու կը յաջորդէին, հազիւ թէ կիսակատար պատասխաններու տեղիք կար. հոն ամէն քանի վրայ կը խօսուէր. ճանապարհին վրայ՝ թէ վտանգ կա՞ր, թէ Ռշտունեաց Տիկինն ինչպէ՞ս էր, թէ Ոստանին հաւնէ՞ր էր որդին, թէ Վանայ ծովը եւ Վարդանաբերդի լիճը ի՞նչ տարբերութիւն ունէին իրարմէ. վերջապէս յայտնի էր թէ մայր մը կար դորովասիրտ եւ որդի մը, որ իւր մայրը կը պաշտէր: Բայց յանկարծ այս մայրը իբր խոր քունէ արթնացաւ, թողուց զաւկին ձեռքը.

— Սակայն դու, որդեակ Գրիգոր, որ այս ժամուս կը հասնիս, անշուշտ անօթի ես. ձայն չես հաներ, եւ ես՝ վա՛յ ինձ, որ քեզմով միայն համրացեալ՝ բոլորովին մոռցայ հարցնել... Աղջկո՛ւնք,— կ'ըսէր նաժիշտներումէ,— շուտ կերակուր հրամայեցէք...

— Իրաւ, սիրելի մայրիկ, ութ թերեւս աւելի ժամ կայ, որ ոչ հաց եւ ոչ ջուր մտած է բերանս, բայց որ քեզ տեսայ մոռցայ անօթութիւն եւ յոգնածութիւն:

— Ո՛հ,— կ'ըսէր մայրը դարձեալ տեսնելով տղուն փոշին եւ քրտինքը,— շուտ ջուր բերէք, զգեստ բերէք...

Եւ երբ կոնքը աղախին մը գուճս բռնած՝ ուրիշ մը ջուր կը լցնէր, ինք Տիկին մայրը ձիւնի պէս թելերը սոթտած փոքրիկ բօթիկ ձեռքերով իր զաւակին գլուխը կը լուանար. ծայրերը ոսկեթել բանուած դէնջակով մը սրբեց մազերը, որդուոյն սիրուն գլուխը իւր ձեռքերուն մէջ՝ համբոյր մը դրաւ ճակատին, եւ նա մայրենի ձեռքը համբուրեց գգուանօք եւ շնորհակալ սրտիւ:

Երիտասարդը կ'ընթերէր եւ մօր հարցմունքներուն կը պատասխանէր միանգամայն:

— Ռշտունեաց Ոստանը չի բաղդատուի մեր պզտիկ դղեակին եւ լճին հետ, բայց եթէ հոն մեծութիւն, ընդարձակութիւն կը տիրէ, հոս վայելչութիւն մը կայ, որ կը գրաւի, հոն եթէ Սէթայ տիկին ընդարձակ գաւառի մը իշխանուհի կը հրամայէ, կը սաստէ, կը պատժէ, կը փուխէ, միշտ զբաղուած հազիւ թէ կանոնաւոր